21 մայիսի 2020 թվականի N 795 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի N 1009-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 2-ի «Հանգրվան» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 1009-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) ուժը կորցրած ճանաչել որոշման 7.3-րդ, N 3 հավելվածի 1-ին, 4-րդ, 9-րդ, 21-րդ, 23-րդ, N 4 հավելվածի 1-ին, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 13-րդ, 26-րդ, 30-րդ, N 5 հավելվածի 11-րդ կետերը և N 7 հավելվածը.

2) որոշման N 3 հավելվածում «ընդամենը 44» բառերը փոխարինել «ընդամենը 30», իսկ N 4 հավելվածի «ընդամենը 61» բառերը՝ «ընդամենը 50» բառերով.

3) որոշման N 4 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 33-րդ կետով.

«

33.	Խալոյան Արմեն Նապոլեոնի	անօթևան	1	չունի	AT0394884 20.02.2020 թ. 011

».

4) որոշման N 5 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ կետով.

«

12.	Պետրոսյան Ռազմիկ Դերենիկի	մանկական խնամա-կալական կազմակեր-պություն	1	քաղ. Գավառ, փող. Օգոստոսի 23, տուն 106	AR0425552 16.08.2017 թ. 009

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. մայիսի
Երևան